

## ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ

ԴՊՐՈՑԸ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱԽԱԴԱՎԻԹԻՆ Է

Ա.

Դպրոցը եկեղեցու նախադավիթն է։ Այս գաղափարը հիմնուած է քրիստոնէութեան երկհազարամեայ պատմութեան և փորձառութեան վերայ։ Քրիստոնէութիւնը որպէս քաղաքակրթական բարձր կրօն առանձին նշանակութիւն է տուել ուսուցման և ընդհանրապէս դպրոցական գործին։ Փոփոխուել են դպրոցի մասին եղած հասկացողութիւններն ու ուսուցման եղանակները, բայց եկեղեցուց անբաժան է մնացել այս հաստատութեան գաղափարը։ Եւ հասկանալի է այդ. դպրոցը եկեղեցու կենդանութեան գլխաւոր երակներից մէկն է, առանց որին շատ կդժուարանայ իւր բարոյական և քաղաքակրթական բարձր առաքելութեան հասնել։ Այդ պատճառով էլ ամենավազ ժամանակից սկսած մեծ ուշադրութիւն է դարձրել դպրոց ների և հոգեոր գիտութիւնների ծաղկման վերայ։

Հայոց եկեղեցին ևս իւր հաստատութեան հինգ առաջին օրերից իւրացըել է այս ուղղութիւնը։ Լուսաւորչի, Ներսէս մեծի, թարգմանիչների գործունէութիւնը այս խնդրի համար, յայտնի է ամենքին։ Հայոց եկեղեցին ինքը մշտական կապ է պահել քաղաքակրթութեան աւելի բարձր աստիճանի վերայ եղած եկեղեցիների հետ և իւր սպասաւորների ձեռքով։ աշխատել պատուաստել դուրսը ծաղկած ուսումն ու գիտութիւնը մեր մէջ։ Վարդապետարանները, որ ժամանակի դպրոցներն էին և հաստատուած վանքերում, միշտ աշխատել են ժամանակի բերմունքների համեմատ գիտութեան և լուսոյ կանթեղն անշէջ պահել։ Այն հոգեոր բարիքը, որ ժառանգութիւն է մնացել

մեզ, ըստ մեծի մասին պարտական ենք վանական դպրոցներին, վարդապետարաններին և վարդապետներին:

Նոր ժամանակը բերեց իւր հետ կեանքի նոր պայմաններ: Բնականաբար այս նոր պայմանների համեմատ էլ պէտք է կազմակերպութիւն ստանային եկեղեցու հոգանու տակ հաստատուած դպրոցները: Նախկին վարդապետարանների տեղ ըռնել են այժմ Մ. Աթոռի հոգեոր ճեմարանն ու թեմական դպրանոցները, քահանաների ձեռքով աւանդուած ուսուցման փոխարէն՝ գիւղական և բաղաքային ծխական դպրոցները: Փոխուել է դպրոցի արտաքին կազմը, փոխուել է ուսուցման եղանակը, ընդարձակուել են աւանդուելիք առարկաների և գիտութիւնների շափն ու որակը, բայց էական դպրափարը պէտք է անփոփոխ մնայ—կրօնական-բարոյական դաստիարակութիւն տալ մատաղ սերնդին:

### Բ.

Արեելեան փոքր եկեղեցիների մէջ մեր եկեղեցին է միայն, որ կենսունակութեան նշաններ է ցոյց տալիս. դարաւոր հալածանքն ու ըռնութիւնը, պատերազմները, աւերումները ջլատել են նորա ոյժերը, արինաքամ արել, բայց անյուսալի չէ, թէ նա կարող է վերածնուել նոր հոգւով և մեր ժողովրդի հոգեոր կեանքի և ապագայի համար առաջնակարգ, փայլուն դեր կատարել: Զպէտք է աշքից թողնենք արեելեան միւս հարեւան եկեղեցիների տիսուր վիճակը, նոքա ևս երկար դարերի ընթացքում նոյն ապաբաղդ վիճակի մէջ, ինչպէս մերն էր, բայց կորցրել են արդէն վերածնութեան ունակութիւնը. նիրհում են խոր քնով, երբեմն այնքան ծաղկած և արեելքի քաղաքակրթութեան պատմութեան մէջ կարեոր տեղ ըռնող նեստորական և Յակոբիկ եկեղեցիները: Թոհյլ տանք, որ մեր եկեղեցին էլ նոյն վիճակին հասնէ: Թոհյլ տանք և անտարբերութեամբ ականատես լինինք, որ շարունակուի անարգելք մեր աղգային դարաւոր մայր եկեղեցու քայլաման դործողութիւնը: Եթէ ոչ, ապա ուրեմն եկեղե-

ցական դպրոցները պէտք է այնպիսի վիճակի մէջ դրուին, որ նոքա իրենց իսկական կոչման ծառայել կարողանան. որովհետև դպրոցները ոչ միայն նպաստում են կրօնական-բարոյական գաղափարները ժողովրդի մէջ տարածելու, այլ և ազրիւր են եկեղեցու յարանուն գարգացման և կենդանութեան համար. Այդ դպրոցներից պէտք է մեր եկեղեցին քահանայութիւն և նուիրապետութեան պաշտօնեաներ ստանայ, այդ պրոցները պէտք է հող պատրաստեն աղքային-եկեղեցական գիտութիւնները զարդացնելու, քրիստոնէական բարձր ճանաչողութիւնը ուսումնասիրելու և իւրացնելու. Մի անգամ ընդ միշտ պէտք է մեր նուիրապետութեան բարձրաստիճան ներկայացուցիչների և բանիմաց հասարակութեան համար պարզ լինի, որ այլ ևս պատահական, անպատրաստ մարդկանց վերարկու հաղցնելով՝ կամ գլխին վեղար դնելով, եկեղեցի պահել չենք կարող, իսկ մեր դպրոցներից, յատկապէս թեմական դպրոցների և Մ. Աթոռի Ճեմարանի վիճակից է կախուած մեր եկեղեցու վերակենդանութիւնն ու անկումը. Այսպիսի առաջնակարգ նշանակութիւն ունեցող խնդրի համար անտարբեր լինել չենք կարող և չտէտք է լինենք, որովհետև եկեղեցու և ժողովրդի շահերի համար այդ գաւաճանութիւն կլինէր. Ում կամար թանգ է մեր հոգեոր, սրբազն հայրենիքի՝ Հայաստանեայց եկեղեցու վերածնութեան եւ յարատեւութեան գաղափարը, պէտք է բարձրացնէ իւր ձայնը իրերի այս տիսուր ընթացքի դէմ, դպրոցների այս խառնակ, անկերպարան վիճակի դէմ,

Դ.

Իսկ ի՞նչ է մեր դպրոցների վիճակը:

Բարելոնեան խառնակութիւն, կամայականութեան տիրապետութիւն, կըքոտ և աններելի կուսակցական պայքարների ասպարէզ, հոգեոր իշխանութեան հոկողութեան և ստորագրեալ մարմինների ճշդապահութեան բացակայութիւն, աշակերտական սանձարձակութիւն, ահա միքանի խօսքով այդ վիճակը. Փաստեր կկամենաք, հէնց

այս ուսումնական տարին մեր դպրոցների պատմութեան մէջ այդպիսի փաստերի երկար շարք է ներկայացնում։ Ուսումնական տարուայ առաջին օրերը Յովսանեան օրիւ որդաց դպրոցի գայլթակղելի կուսակցական պայքարով սկսուեցաւ. շաբաթներով դպրոցը չէր բացւում, որովհետեւ դաշնակցական Հոգաբարձութիւնը չէր կամենում օրինաւոր ընտրուած և Ա. Հայրապետի կողմից հաստատուած հակառաջնակցարան տեսչին ընտունել։ Շուշուայ թեմական հոգ գեոր դպրանոցի բարձր դասարանները չորս ամսից ի վեր փակուած են ըստ երեսոյթին շատ չնշին պատճառներով, բայց կրթերի բորբոքումը դարձեալ կուսակցական պայքարաների արդիւնք է, լրագիրների մէջ թեր և գէմ գրուած յօդուածներին նայելով։ Ե. Նախիջևանի թեմական հոգեոր դպրանոցի բարձր դասարանները դարձեալ մի քանի ամիս փակ էին, հասարակութիւնը, լրագրութիւնը ազմկուած էր, որովհետեւ դաշնակցական մի քանի թեթևամիտներ խեղճ աշակերանների ձեռքով կամեցել են իրենց կուսակցութեան համար շագանակ հանել կրակից։ Ճեմարանում աշակերտութիւնը բաժանուած էր երկու կուսակցութեան, որ գումարութիւն էր ստացել որոշ ներշնչումներով վերջին ժամանակներս և այդ բաժանման զօհ եղան բարձր դասարանների և լսարանների 24 ուսանող։ Լսարաններից գոնէ երկուսը փակման վտանգի են ենթարկուած միւս տարի։

Հոգաբարձութիւնները, ուսուցչական մարմինները կամ վարչութիւնները մոռացել են իրենց ստորագրելութեան պարտականութիւնները։ Կամայական կերպով փոփոխութիւններ են մտցնում ծրագիրների մէջ, կրճատում են կրօնական առարկաները թեմական դպրոցներում, ճեմարանում։ Յայտնի է, թէ ներսիսեան դպրանոցի Հոգաբարձութիւնը ուսումնական տարուայ սկզբին ինչպիսի փոփոխութիւններ մտցրեց ծրագրի մէջ, նոր առարկաներ աւելացնելով կամ կրօնականները յապաւելով։ Նա հրաւիրեց տեսուչ, ուսուցիչներ, որոնք ամիսներով պաշտօն էին կատարում և հոգեոր բարձր իշխանութիւնը պաշտօ-

նական տեղեկութիւններ չունէր այդ մասին։ Հոգեոր ձեմարանի մասնագիտական բաժնում այս տարի աստուածարանական ոչ մի զիտութիւն չի աւանդում, բարձր դասարաններում էլ կրօնական ուսմունք չկայ շատ չնչին, ծիծաղելի պատճառներով։ Աշակերտները ինքնաբերաբար դադարել են նոյն իսկ տօն և կիւրակի օրերը եկեղեցի դալ, եկեղեցում երգել, դադարել են առաւօտեան և երեկոյեան հասարակաց ազօթք ասելուց ձեմարանի մէջ։ Մագիրներում յոխորտում են, թէ ինչ կամենան, կանեն և թէ իրենք են իրենց ընկերներին գուրս արել և գուցէ այդ իրողութիւն է ըստ էռթեան։ Եւ չկայ մէկը, որ այդ անտեղութեան առաջն առնէ։ Յուսահատական է այս մեռելութեան նմանող անտարբերութիւնը։ Ախալցխայի կամ՝ Ալէքսանդրապօլի ուսուցչական խմբերը չեն հպատակում հայրապետական կոնդակների կամ առաջնորդների կարգադրութեան, իսկ վերջիններիս կարգադրութիւնները իրաւացի կամ անիրաւ տեղը հակասում են հայրապետական կարգադրութեան։ Յիշենք արգեօք Ախալցխայի, Նուխու, Գեորիսի, Զալալօղլու—խլրտումները։ Այս ակնարկները բաւական են մեր դպրոցների վերին աստիճանի ցաւալի գրութիւնը ցոյց տալու համար։

## Դ.

Արդ, ինչն է պատճառը։

Մեր կարծիքով երեք են այդ պատճառները, առաջին ուսուական յեղափոխութեան ազդեցութեան տակ յառաջ եկած մտքերի շփոթութիւնը, երկրորդ մեր կուսակցութիւնների անմիտ պայքարը և քարոզչութիւնը դըպրոցական հողի վերայ, և երրորդ հոգեոր վարչութեան թոյլ հսկողութիւնն ու պահանջները։ Յեղափոխական շըրջանին յատուկ երեսյթ է, որ լաւագոյն, օդտակար ձըպրումներին ընթացակից են լինում յաճախ վնասակար և չափազանց ծայրայեղ անմտութիւններ։ Այդ տեսակ անմտութիւններից մէկն է մատաղ, անչափահաս և տհաս սերնդի մասնակցութիւնը քաղաքական խնդիրների լուծ-

ման մէջ։ Կրթութեան և դաստիարակութեան գործը իւր օրէնքներն ու կանոններն ունի, որ հիմնուած է հոգեբառնութեան վերայ, մարդկային հոգու զարգացումն ընթառում է աստիճանաբար, հասակի և հոգեոր ունակութիւնների կարողութեան համեմատ. ոչ մի տեղ ոստիւններն այնքան վսասակար և ցաւալի հետեանքներ չեն ունենում, ինչպէս դաստիարակութեան և հոգեկան զարգացման խընդիրների մէջ։ Ժամանակից առաջ հասունացած երեխանները ոչ միայն դառնում են անգործնական, խօսքի մարդմիայն, այլ և կատարեալ հասունութեան հասնել չեն կարողանում, կորցնում են ստեղծագործելու ընդունակութիւնը և ծերանում են հոգւով և մարմնով իրենց տարիշքից շատ առաջ։ Բայց այս դեռ բաւական չէ, անչափահաս երեխանների և պատանիների մէջ զարգանում է այնպիսի նեղ, կուսակցական ոգի, որ կորցնում է այլ և ուրիշին հասկանալու և գնահատելու կարողութիւնը։ Նոքադառնում են յանդուգն, անպատկառ և բարոյական սկըզբունքներից զուրկ մարդիկ։ Ով դիտել է դպրոցական կեանքի վերջին երկու տարինների երեսյթները Ռուսաստանում, նորա համար պարզ են մեր ակնարկները. շանտաժների, աւազակութիւնների և ամեն տեսակ անկարոգութիւնների մէջ պակաս մասնակցութիւն չէ ցոյց տալիս և աշակերտական մատաղ սերունդը։ Տեղի սղութիւնը թոյլ չէ տալիս մեղ աւելի մանրամասն կանգ առնել այս խնդրի վերայ, բայց կարծում ենք այս ցուցումներն էլ բաւական են պարզելու մեր ասելիքը։

Մասնաւորելով խօսքը մեր դպրոցների վերաբերութեամբ, պէտք է հոգու բոլոր զօրութեանմբ բողոքենք այն իրողութեան դէմ, որ քաղաքական և դեռ նոյն իսկ յեղափոխական բնաւորութիւն կրող կուսակցութիւններ աշխատում են եկամուտներ վաստակել բոլորովին անչափահաս, սովորող սերնդի մէջ։ Տարաբաղտաբար իրողութիւն է այս, որ հաստատում է մի շարք փաստերով։ Նոյն իսկ կուսակցութեան ներկայացուցիչներից ոմանք չեն քաշւում պաշտպանել, թէ կարելի է կուսակցական քարոզչութիւն

անել դպրոցների մէջ։ Լրագրութեան որոշ մասը թե է տալիս աշակերտութեան նաև անիրաւ, անարդար ըմբռատութեան դիմելու, «պէտք է ըմբռատացներ» առաջնորդող սկզբունք է որոշ մարդկանց համար։ Այսպէս էր ն. Նախիջևանի թեմական դպրոցում։ Հասարակութեան ներկայացուցիչների ժողովը հաստատեց Հոգաբարձութեան և ուսուցչական ժողովի որոշումները, անարդար և դատապարտելի համարեց աշակերտութեան արարմունքը, որ զոհ էր դարձել դաշնակցական մի խմբակի ձեռքում։ Բայց չնայելով այս ակնյայտնի իրողութեան, ամեն տեղից հեռագիրներով և գրութիւններով գարշանք և նողկանք» էին յայտնում Հոգաբարձութեան և ուսուցչական մարմնի, յատկապէս օրանց նախագահների դէմ։ Նոյն իսկ ծխական ժողովներ՝ հարիւրաւոր վերստերով բաժանուած դէպքերի վայրից՝ նոյն թեթեամտութեան ճանապարհը բռնեցին։ Այս, այդ նողկանքներն ու գարշանքները լրագրական էջերում՝ արգեն չափից դուրս անխորհուրդ և զզուելի են դարձել։ Պէտք է վերջապէս սթափուել, և հասկանալ, թէ ուր է տանում այս անմտութիւնը։

Անշոյշտ պակասութիւններից զերծ չեն մեր դպրոցները կառավարութեան և ծրագրի կողմից, այդ արգեն հոգեոր իշխանութեան գործն է, սրտացաւ վերաբերմունք ցոյց տալ, կառգաւորել, թերութիւններն ուղղել օրինաւորութեան և պատմական կեանքի աւանդած պարտաւորութեան սահմանների մէջ Անհրաժեշտ է դպրոցական գործում ժողովրդի գործակցութիւնը, բայց ոչ երբէք ծայրայեղ կուսակցութիւնների և կրքերի իշխանութիւնը։ Հոգեոր իշխանութեան պարոքն է արթուն աշքով հսկել, հարկաւոր ժամանակ եռանդուն միջամտութիւն ցոյց տալ, որպէս զի ամեն ինչ տակն ու վրայ անող հեղեղը չողողէ մեր հոգեոր անդաստանները և չոչնչացնէ նորա մատաղ տունկերը։ Կզայ ժամանակ, երբ կզգանք մեր սխալները, բայց ուշ կլինի այդ։ Զալէտք է երբէք մոռանանք, որ դպրոցը եկեղեցու նախագաւիթն է։